Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 238-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Ամփոփագիր - էջ 4
3. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 7
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ – էջ 10
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 12
6. Հետհսկողական գործընթաց - էջ 14
7. Առաջարկություններ - էջ 16
8. Հավելվածներ և այլ տեղեկատվություն - էջ 17

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստսի 4-ի թիվ 143-Ա, 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա և 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հավապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը, 2020 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 21-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) և «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի պլանի և ճշտված պլանի տարբերությունը՝ 6,151,2 հազար դրամը վերաբերում է Ծրագրերից «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) հոդվածին և կապված է Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը միջոցառումների փոփոխության համապատասխան ծանուցման հետ, ինչը վերաբաշխման միջոցով ուղղվել է (1162-11004) «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» հոդվածին:

Կոմիտեի ֆինանսավորումը ըստ Ծրագրերի կիսամյակային ճշտված պլանի նկատմամբ կազմել է 84,1 տոկոսը կամ 664,487.5 հազար դրամ, որը Ծրագրերից «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) հոդվածով կազմում է 599,337.5 հազար դրամ, իսկ «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) հոդվածով՝ 65,150.1 հազար դրամ: 2020 թվականի առաջին կիսամյակի թերֆինանսավորումը ճշտված պլանի հանդեպ կապված է այն հանգամանքի հետ, ըստ որի ֆինանսավորումը բացվել է կատարվելիք դրամարկղային ծախսին համապատասխան, ընդ որում որոշակի շեղումով, ինչը պայմանավորված է երկրում ստեղծված արտակարգ իրավիճակում որոշակի ծախսերի հետաձգմամբ, ինչպես նաև կապված գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի քանակով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ըստ Ծրագրերի Կոմիտեի դրամարկղային ծախսի և ֆինանսավորման միջև 27,415.1 հազար դրամ տարբերությունը ամբողջությամբ վերաբերում է «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) հոդվածին, ինչը պայմանավորված է միջազգային գործընկերների կողմից ներկայացված ինվոյսների հիման վրա վճարման իրականացման, ինչպես նաև այն հանգամանքով, ըստ որի գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ֆինասավորումն իրականացվում է վերջինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Դրանք կարող են ունենալ որոշակի շեղումներ՝ բացառապես եռամսյակային կտրվածքներով:

Ըստ Ծրագրերի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև 107,075.3 հազար դրամի դրական տարբերությանը, «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) հոդվածով կազմել է 85,379.1 հազար դրամ, իսկ «Գիտաշխատողների գիտական աստիճանների

համար տրվող հավելավճարներ» (1162-11002) հոդվածներով՝ կազմել է 21,696.2 հազար դրամ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002 հոդվածում 73), 118,4 հազար դրամ բացասական տարբերությունը պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում գոյացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցությամբ, իսկ 158, 492.1 հազար դրամի տարբերությունը՝ կազմակերպությունների կողմից 2020 թվականի հունիս ամսվա համար հաշվարկված, սակայն դեռ չվճարված աշխատավարձերի հետ (337,7 + 158,118,4 - 73,112,9):

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, ըստ Ծրագրերի Կոմիտեի դեբիտորական պարտքերը տարեսկզբին կազմել են 569,059.7 հազար դրամ, որն ամբողջապես գոյացել է նախորդ տարվա բյուջեից: Առաջին կիսամսյակի ավարտին ըստ Ծրագրերի Կոմիտեի ընդհանուր դեբիտորական պարտքերը կազմել են 607,238.5 հազար դրամ, աճը՝ 38,178.8 հազար դրամ: Կրեդիտորական պարտքեր ըստ Ծրագրերի տարեսկզբի դրությամբ Կոմիտեն չի ունեցել, իսկ 2020 թ. առաջին կիսամսյակի ավարտին՝ հունիսի 31-ի դրությամբ, դրանք կազմել են 145,254.2 հազար դրամ: Ըստ Ծրագրերի պատկերը հետևյալն է՝

- «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածում՝ տարեսկզբի 22,871.9 հազար դրամից հասնելով 107,347.3 հազար դրամի (աճը՝ 84,475.4 հազար դրամ) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով՝ 545,514.1 հազար դրամից նվազել և կազմել են 499,866.5 հազար դրամ (նվազումը՝ 45,647.49 հազար դրամ): Նշված հոդվածում դեբիտորական պարտքերի ընդհանուր աճը կազմել է 38,453.8 հազար դրամ, որից 84,475.4 հազար դրամը դրական տարբերությունը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածում և 45,647.49 հազար դրամ բացասական տարբերությունը «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածում, պայմանավորված են ֆինանսավորված կազմակերպությունների կողմից իրականացված գնումների գործընթացների շարունակականության հետ: Հիշատակված դեբիտորական պարտքերի զրոյացումը նախատեսված է իրականացնել մինչև բյուջետային տարվա ավարտը:
- «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) Դեբիտորական պարտքները տարեսկզբին «Այլ

ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով տարեսկզբի 300,0 հազար դրամից էականորեն նվազել են 275,0 հազար դրամով և կիսամսակի վերջին կազմել են ընդամենը 25,0 հազար դրամ, որը նախատեսված է մարել մինչև հաշվետու տարվա ավարտը:

2020թ. առաջին կիսամսյակի արդյունքներով Կոմիտեի Ծրագրերի կրեդիտորական պարտքերը ձևավորվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածում՝ 11,362.5 հազար դրամ և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463800) հոդվածով՝ 112,470.5 հազար դրամ, ընդամենը 123,833,0 հազար դրամ: Կրեդիտորական պարտքերի գոյացումը պայմանավորված է կազմակերպությունների կողմից հունիս ամսվա համար հաշվարկված, սակայն դեռ չվճարված աշխատավարձերի և արձակուրդային վճարների հետ:

Կոմիտեի «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) ծրագրով ՀՀ պետական 2020 թվականի առաջին կիսամյակի բյուջեի ճշտված պլանի (378,900.0 հազար դրամ) և փաստացի ֆինանսավորման, դրամարկղային ծախսի (313,750.0 հազար դրամ) միջև 65,150.0 հազար դրամ տնտեսումը պայմանավորված է թեմաներում ընդգրկված գիտաշխատողների՝ գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների քանակի համամասնական նվազմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Կոմիտեի փաստացի (335,446.2 հազար դրամ) և դրամարկղային ծախսերի միջև առաջացած 21,696,2. հազար դրամը պայմանավորված է կազմակերպությունների կողմից 2020 թվականի հունիս ամսվա համար հաշվարկված, սակայն դեռևս չվճարված աշխատավարձերի հետ տրվող հավելավճարների հետ: Կոմիտեի նշված ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվեքննությամբ պարզեց, «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով տարեսկզբի 300.0 հազար դրամ մնացորդը կիսամյակի ավարտին կազմել է 25.0 հազար դրամ (նվազումը - 275.0 հազար դրամ), իսկ կրեդիտորական պարտքերի տարեսկզբի բացակայության պայմաններում կիսամյակի ավարտին աճը կազմել է 21,421.2 հազար դրամ, որի պատճառը Կոմիտեի կողմից ֆինանսավորվող կազմակերպություններում 2020 թվականի հունիս ամսվա համար հաշվարկված հավելավճարների վճարման տեղափոխումն է հաջորդ ամիս:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի Ծրագրերի շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամսյակի պլանը կազմել է 4,278,608.2 հազար դրամ, իսկ ճշտված պլանը հաստատվել է 4,284,759.3 հազար դրամ: Կոմիտեի ֆինանսավորումը ըստ Ծրագրերի կազմել է 3,602,271.8 հազար դրամ (կիսամսյակային ճշտված պլանի 84,1 տոկոսը կամ 664,487.5 հազար դրամ), իսկ 2020թ. առաջին կիսամսյակի արդյունքներով ըստ Ծրագրերի Կոմիտեի փաստացի ծախսը կազմել է 3,699,922.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 3,592,846,7 հազար դրամ: Կոմիտեի 2020 թ.-ի տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 1-ում, 2020 թ.-ի առաջին կիսամյակի ֆինանսական ամփոփ ցուցանիշները՝ աղյուսակ 2ում, իսկ ըստ Ծրագրերի՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 1

Կոմիտեի 2020 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման պլանավորվող ծավալը, *(ելքեր)*	Տարեկան պլան	Փոփոխու-թյունները տարեկան պլանում (+/- ավելացում-նվազում)	Տարեկան ճշտված պլան	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարեկան պլանի մնացորդը, ներառյալ կիսամյակի դրությամբ
Կոմիտե ***(105015)***	**14,128,041.3**	**244,947.0**	**14,172,988.3**	**39.0**	**8,679,094.7**

Աղյուսակ 2

Կոմիտեի 2020 թվականի առաջին կիսամյակի ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2020 թվականի առաջին կիսամյակի						Տարեկան պլանի ընացորդ՝ առաջին կիսամյակի դրությամբ	Կատարման %-ը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
	Պ լ ա ն	Փոխհատ-ուցումներ տարեկան պլանում ՀՀ կառավարու-թյան կողմից	Ճ շ տ վ ած պ լ ա ն	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս		
Կոմիտե ***(105015)***	**6,681,755.1**	**103,197.0**	**6,784,952.1**	**5,693,893.6**	**5,606,403.0**	**5,885,719.6**	**1,091,058.6**	**82,6**

Աղյուսակ 3

Կոմիտեի 2020 թվականի առաջին կիսամյակի ըստ Ծրագրերի ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Թիվ	Հաշիվներ	Հաշվետու ժամանա-կահատված-ի պլան	Հաշվետու ժամանա-կահատվածի ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Դրամարկ-ղային ծախս	Փաստացի ծախս
ԾԲ ծածկագիրը, անվանումը - (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում»						
1	*(462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»*	**603,173.8**	**603,173.8**	**553,023.8**	**553,022.3**	**553,022.3**
2	*(463500) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»*	**840.8**	**840.8**	**840.7**	**840.7**	**1,214.4**
3	*(463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»*	**2,021,855.9**	**2,028,007.0**	**2,011,462.9**	**2,011,462.9**	**1,938,350.0**
4	*(463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին»*	**82,759.3**	**82,759.3**	**76,448.0**	**76,448.0**	**76,448.0**

5	*(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»*	**1,191,078.4**	**1,191,078.4**	**664,746.5**	**637,322.8**	**795,441.2**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**3,899,708.2**	**3,905,859.3**	**3,306,521.8**	**3,279,096.7**	**3,364,475.8**
ԾԲ ծածկագիրը, անվանումը - (1162-12001) «Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ»						
6	*(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհ-ներ»*	**378,900.0**	**378,900.0**	**313,750.0**	**313,750.0**	**335,446.2**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**378,900.0**	**378,900.0**	**313,750.0**	**313,750.0**	**335,446.2**
	ԱՄԲՈՂՋԸ՝	**4,278,608.2**	**4,284,759.3**	**3,620,271.8**	**3,592,846.7**	**3,699,922.0**

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Կոմիտեի 2020թ. առաջին կիսամյակում իրականացված գնումների գործընթացները, ըստ որի Կոմիտեն հայտարարել է գնում թվով 43 չափաբաժիններով՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ.

4.1 Կոմիտեի կողմից «Procurement. am» տեղեկագրում չեն հրապարակվել գնման հրավերները և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները: Հրապարակվել են միայն կնքված կայմանագրի մասին հայտարարություններ՝ հիմնականում սահմանված ժամկետների ուշացումներով: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

4.2 Կոմիտեում բացակայում են պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջների հետ:

4.3 Կոմիտեի կողմից՝ իբրև պատվիրատուի, տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով 2020 թվականին գնում չի հայտարարվել, պայմանագիր չի կնքվել, շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020 թվականի առաջին կիսակյակի ընթացքում վճարելով 425,3 հազար դրամ գումար: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ա ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

4.4 Կոմիտեն թվով 2 չափաբաժիններով հայտարարված (ընդամենը՝ 1,240.0 հազար դրամ) գնման ընթացքում չեն սահմանվել և չի պահպանվել անգործության ժամկետը: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջների հետ

4.5 Կոմիտեն գնումների տարեկան պլանով նախատեսված մեկ չափաբաժինը տրոհել է մասերի՝ առանց գնումների պլանում փոփոխությունների կատարման և այդ

չափաբաժնի համար նախատեսված ընդհանուր գումարից կատարել է գնում 40,0 հազար դրամի չափով Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:

4.6 Հաշվեքննությամբ պարզվեց, որ ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշմամբ Կոմիտեի նախագահի և տեղակալի աշխատանքից ազատմամբ, վերջիններիս վերջնահաշվարկի 2020 թվական տեղափոխմամբ, նրանց չօգտագործված արձակուրդների հաշվարկների և աշխատավարձի ֆոնդում անբավարար միջոցների առկայությամբ (ընդամենը՝ 7,503,792.0 ՀՀ դրամ) պայմանավորված Կոմիտեն փորձագետների վարձատրության (11002) համապատասխան տողի միջոցներից, նախապես ենթադրելով, որ դրանք չեն ծախսվելու առաջին եռամսյակում, կատարել է ներքին վերաբաշխում՝ հետագա եռամսյակներում փոխադարձ մարումներով տարբերությունները փակելու նպատակով: Կոմիտեն ներքին հոդվածային փոփոխությունների և միևնույն ծրագրերի միջեռամսյակային վերաբաշխումների թույլատրված չափաբաժիններով իրականացման դեպքում ծանուցում է ՀՀ Ֆինանսների նախարարություն: Հաշվեքննությամբ պարզվեց (Կոմիտեի նախագահի 18.09.2020թ. թիվ 08–01/20 պարզաբանում), որ Կոմիտեն իր իրավասության սահմաններում չափաբաժիններով միջհոդվածային և միջեռամսյակային վերաբաշխումը իրականացրել է առանց սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ծանուցելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշման 12-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված կարգի հետ:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Կոմիտեի «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) ծրագրի հաշվեքննությամբ պարզեց, որ 2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված 82 կազմակերպություններից

ֆինանսավորվել են 78-ը, որից 32 գիտական և գիտատեխնիկական հաստատություններում հայտնաբերվել են հետևյալ տարբերությունները.

5.1 Թվով 545 գիտությունների դոկտորներից 6-ը 13 տարբեր ամիսներ կազմակերպությունների կողմից ներկայացված ամսեկան հայտերով, ընդգրկվել են վճարման ցանկերում՝ լրացուցիչ ստանալով 650,000.0 ՀՀ դրամ, զուգեռաբար, թվով 18 գիտությունների դոկտորներ 10 տարբեր ամիսներ բացակայել են ցանկերից՝ համապատասխանաբար տնտեսելով 1,050,000.0 ՀՀ դրամ: Տարբերությունը տնտեսմամբ կազմել է 400,000.0 ՀՀ դրամ: Թվով 1420 գիտությունների թեկնածուներից 25-ը 58 տարբեր ամիսներ լրացուցիչ ընդգրկվել են ցանկերում՝ ստանալով 18,000,000.0 ՀՀ դրամ, իսկ թվով 25 թեկնածուներ 58 տարբեր ամիսներ բացակայել են ցանկերից՝ տնտեսելով՝ 1,400,000.0 ՀՀ դրամ: Տարբերությունը գերածախսով կազմել է 400.000 ՀՀ դրամ:

Արդյունքում, ըստ Կոմիտեի կողմից ներկայացված հաշվետվության առաջացած շեղումների գիտությունների դոկտորներին հաշվարկված և ամսեկան կտրվածքներով վճարված 400,000.0 ՀՀ դրամ գումարների տնտեսման տարբերությունը փակվել են գիտությունների թեկնածուներին հաշվարկված և ամսեկան կտրվածքներով վճարված նույն չափի գումարների գերածախսով (Տես՝ Հավելված 1,Հավելված 2):

5.2 Կոմիտեի 2020 թվականի առաջին կիսամյակում «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (1162-11002) ծրագրով նախատեսված «Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն» միջոցառումների թվով 13 ուղղություններից 7-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ՝ 626,762.6 հազար դրամ գումարի շրջանակներում: Հաշվեքննությամբ պարզվեց, որ մասնավորապես՝

- «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումներ» ենթածրագրով նախատեսված 30 միջոցառման փոխարեն իրականացվել է 1-ը, իսկ «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցներ» ենթածրագրով՝ նախատեսված 15-ից 1-ը: Ինչ վերաբերում է «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոններ» ենթածրագրին, ապա նախատեսված մեկ միջոցառումը չի իրականացվել: Հաշվեքննության օբյեկտը

վերոհիշյալ երեք ենթածրագրերով քանակագումարային տարբերությունները հետաձգել և իրականացումը տեղափոխել է հաջորդ եռամսյակներ:

- «Գիտական գործուղումներ» ենթածրագրով նախատեսված 50 միջոցառումները չեն իրականացվել համավարակով պայմանավորված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով:
- Նախատեսված թվով 1200 «Գիտական հայտերի փորձաքննություններ» ենթածրագրով իրականացվել են 57-ը, իսկ «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպություններ» ենթածրագրով նախատեսված թվով 3 միջոցառումները չեն իրականացվել կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով:
- Թվով 1183 «Անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավում» ենթածրագրով իրականացվել է ընդամենը 16-ը, որը պայմանավորված է թեմատիկ հետազոտությունների իրականացման հետաձգմամբ:

6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Հ/Հ	Առաջարկություններ	Ընդունելի է/ չի ընդունվել	Կատարողը/ ընդունելի է
1	Քայլեր ձեռնարկել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման նախատեսված միջոցների ճշգրիտ, նպատակային և ամբողջական օգտագործման համար:	«Ընդունելի է»	«Ընդունելի է»
2	Քայլեր ձեռնարկել Գիտական ենթակառուցվածքների զարգացման և պահպանման ծրագրի բոլոր կատարողների նկատմամբ Կոմիտեի կողմից որևէ հսկողական կամ կազմակերպչական գործառույթ նախատեսելու ուղղությամբ, հակառակ դեպքում տվյալ ծրագրով տրամադրվող ֆինանսավորումը կարող է դարձնել ինքնանպատակ:	«Ընդունելի է»	«Ընդունելի է»
3	Առաջարկել ԿՈՄԻՏԵԻՆ ձեռնարկել այնպիսի միջոցներ և հսկողական համակարգեր, որոնցով կվերահսկվեն կնքված պայմանագրերով սահմանված կատարողականների և ներկայացվող հայտերի չափաքանակները՝ թերֆինանսավորման պատճառների բացահայտման համար:	«Ընդունելի է»	«Ընդունելի է»

4	Առաջարկել ԿՈՄԻՏԵԻՆ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնցով կբացառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ.) և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման պայմանների և պահանջների չկատարումը:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Կոմիտեն գնումների ընթացակարգերը կիրականացնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ.) և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման պայմաններին և պահանջներին համապատասխան, մասնավորապես, այսուհետ կիրականացվի նաև գնումների պլանի էլեկտրոնային տարբերակի ստորագրումը և կնիքումը պատվիրատուի ղեկավարի կողմից:

7. Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Առաջարկվում է Կոմիտեին.

7.1 Ներքին հոդվածային փոփոխությունների և միևնույն ծրագրերի միջեռամսյակային վերաբաշխումների թույլատրված չափաբաժիններով իրականացման դեպքում սահմանված կարգով ծանուցել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն

ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշման 12-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված կարգի:

7.2 Տարեկան և եռամսյակային կտրվածքներով ՀՀ պետական բյուջեի կատարման հավելվածներով սահմանված նախատեսված և գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի քանակների էական տարբերությունների դեպքում իրականացնել միջոցների տնտեսման, համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակից բխող վերաբաշխումների այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառմամբ ոչ ֆինանսական ցուցանիշների տարբերությունները կհամընկնեն բյուջետային միջոցների ծախսման համամասնություններին:

7.3 Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների գծով դոկտորների և թեկնածուների թվաքանակների, ինչպես նաև ամսեվճարների իրականացման դեպքում հետևել շահառուների կողմից ներկայացվող հայտերին՝ չափաքանակների փոփոխությունների և տեղափոխումների պատճառների բացահայտման հստակ հիմնավորումներով:

7.4 Գնման հրավերները, պայմանագիր կնքելու հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների ժամկետները, պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջներին համապատասխան:

7.5 Կոմիտեի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնման ընթացքում անգործության ժամկետի հետ կապված գործառույթները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

7.6 Գնումների տարեկան պլանով սահմանված չափաբաժինների տրոհմամբ պայմանավորված գնումները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:

7.7 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումները և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Առաջարկվում է Նախարարությանը, հսկողություն սահմանել.

1. Կոմիտեի կողմից ներքին հոդվածային փոփոխությունների և միևնույն ծրագրերի միջեռամսյակային վերաբաշխումների թույլատրված չափաբաժիններով իրականացվող իրավական ակտերին համապատասխանությանը:

2. Կոմիտեի գնումների ամբողջական ընթացակարգերի և կանոնակարգերի պահպանման նկատմամբ:

3. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումները և միջոցառման կատարման ժամանակացույցը:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

ՑԱՆԿ

Կոմիտեի «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (1162-11002) ծրագրի շահառուների

Թիվ	***Շահառու կազմակերպություններ***
1	***2***

1	ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
3	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
4	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
5	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
6	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
7	ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
8	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
9	ՀՀ ԳԱԱ «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
10	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
11	ՀՀ ԳԱԱ «Ակադեմիկոս Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
12	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
13	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
14	ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
15	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
16	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
17	ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ
18	ՀՀ ԳԱԱ «Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինտիտուտ» ՊՈԱԿ
19	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
20	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ
21	ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ
22	ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» ՊՈԱԿ
1	***2***
23	ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ
24	ՀՀ ԿԳՄՍՆ «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ
24	ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
25	ՀՀ ԿԳՄՍՆ «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
26	ՀՀ ԿԳՄՍՆ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
27	ՀՀ ԿԳՄՍՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

28	ՀՀ ԿԳՄՍՆ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
29	ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ
30	ՀՀ ԿԳՄՍՆ «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ
31	ՀՀ ԿԳՄՍՆ «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
32	«Բարվա» ինովացիոն կենտրոն» ՍՊԸ

Հավելված 2

Հ ա շ վ ա ր կ

Կոմիտեի «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ»
(1162-11002) ծրագրի ըստ 32 շահառուների

Թիվ *	**Գիտությունների դոկտորներ** *(Մարդ)*						**Գիտությունների թեկնածուներ** *(Մարդ)*						**Տարբերություն (ՀՀ դրամ) (+, -)**
	Ավելացում			**Նվազում**			**Ավելացում**			**Նվազում**			
	Քանակ	Ամիս	Գումար **(ՀՀ դրամ)**	Քանակ	Ամիս	Գումար **(ՀՀ դրամ)**	Քանակ	Ամիս	Գումար **(ՀՀ դրամ)**	Քանակ	Ամիս	Գումար **(ՀՀ դրամ)**	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*

1	-	-	0.0	-	-	0,0	1	3	75,000.0	-	-	0.0	75,000.0
2	-	-	0.0	-	-	0.0	1	2	50,000.0	-	-	0.0	50,000.0
3	1	2	100,000.0	-	-	0.0	1	4	100,000.0	-	-	0.0	200,000.0
4	-	-	0.0	-	-	0.0	1	4	100,000.0	-	-	0.0	100,000.0
5	1	4	200,000.0	-	-	0.0	-	-	0,0	1	3	-75,000.0	125,000.0
6	-	-	0.0	-	-	0,0	1	7	50,000.0	-	-	0.0	50,000.0
7	-	-	0.0	1	2	-100,000,0	1	7	175,000.0	-	-	0.0	75,000.0
8	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	-25,000.0
9	-	-	0.0	-	-	0.0	2	5	250,000.0	-	-	0.0	275,000.0
	-	-	0.0	-	-	0.0	1	1	25,000.0	-	-	0.0	
10	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	2	2	-100,000.0	-125,000.0
	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	
11	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	-25,000.0
12	-	-	0.0	-	-	0.0	1	1	25,000.0	-	-	0.0	25,000.0
13	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	2	-50,000.0	-50,000.0
14	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	2	-50,000.0	-50,000.0
15	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	2	-50,000.0	-50,000.0
16	-	-	0.0	1	1	-50,000.0	-	-	0.0	1	2	-50,000.0	-125,000.0
	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
17	-	-	0.0	1	1	-50,000.0	1	5	125,000.0	-	-	0.0	75,000.0
18	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	-25,000.0
19	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	3	-75,000.0	-75,000.0
20	1	2	100,000.0	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	100,000.0
21	1	2	100,000.0	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	100,000.0
22	-	-	0.0	1	2	-100,000.0	1	2	50,000.0	-	-	0.0	-50,000.0
23	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	5	-125,000.0	-150,000.0
	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	1	-25,000.0	
	1	2	100,000.0	-	-	0.0	1	4	100,000.0	-	-	0.0	

24	1	1	50,000.0	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	250,000.0
25	-	-	0.0	-	-	0.0	1	3	75,000.0	-	-	0.0	75,000.0
26	-	-	0.0	1	1	-50,000.0	-	-	0.0	3	1	-75,000.0	-125,000.0
27	-	-	0.0	-	-	0.0	-	-	0.0	1	2	-50,000.0	-50,000.0
28	-	-	0.0	12	1	-600,000.0	1	3	75,000.0	20	1	-500,000.	-975,000.0
	-	-	0.0	-	-	0.0	2	1	50,000.0	-	-	0.0	
29	-	-	0.0	-	-	0.0	3	2	150,000.0	-	-	0.0	200,000.0
	-	-	0.0	-	-	0.0	2	1	50,000.0	-	-	0.0	
30	-	-	0.0	-	-	0.0	1	5	125,000.0	-	-	0.0	125,000.0
31	-	-	0.0	-	-	0.0	2	3	150,000.0	2	1	-50,000.0	100,000.0
32	-	-	0.0	1	2	-100,000.0	-	-	0.0	-	-	0.0	-100.000.0
ԸՆԴԱ-ՄԵՆԸ՝	6	13	650,000.0	18	10	-1,050,000.0	25	58	1,800,000.0	41	32	-1,140,000.0	0.0
	Գիտությունների դոկտորներ *(ՀՀ դրամ)*						**Գիտությունների թեկնածուներ *(ՀՀ դրամ)***						
	-400,000.0						**400,000.0**						

- Համարակալումների անվանումները՝ ըստ Հավելված 1-ի (1-ից 32) հերթականության: